ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
Թմրանյութերից կախվածության բուժում

Որպես Լոս Անջելեսի Շրջանում բնակվող անձ, ով իրավասու է օգտվել Medi-Cal-ի կամ Շրջանի որոշ այլ ծրագրերից, Դուք իրավունք ունեք անվճար ստանալ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ՝ թմրանյութերից կախվածության բուժման ծառայություններ:

Դուք նաև իրավունք ունեք՝

- Արժանանալ հարգալից վերաբերմունքի և խնամքի՝ առանց Ձեր ռասայի, ազգային պատկանելության, էթնիկական պատկանելության, տարիքի, մտավոր կարողությունների, ֆիզիկական կարողությունների, առողջական վիճակի, կրոնի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման վրա հիմնված խտրականության:
- Մասնակցել թմրանյութերից կախվածության Ձեր բուժմանը վերաբերող որոշումների կայացմանը, ներառյալ՝ հրաժարվել բուժումից:
- Ստանալ անհատականացված, հատուկ արդյունքներ հետապնդող բուժում:
- Չենթարկվել հոգեկան և ֆիզիկական բռնության, շահագործման, հարկադրանքի և ֆիզիկական սահմանափակման:
- Պահանջելու դեպքում ստանալ Ձեր բուժման համար կարևոր գրավոր նյութեր այլ ձևաչափերով (օրինակ՝ այլ լեզուներով, խոշոր տառատեսակով, Բրայլյան գրերով և ձայնային տարբերակով):
- Ստանալ ապացույցների վրա հիմնված և էթիկային հետևող բուժում որակավորված անձնակազմի կողմից՝ անվտանգ և առողջ միջավայրում:
- Ունենալ պաշտպանված և գաղտնի պահվող առողջական տվյալներ, ինչպես նաև հնարավորություն՝ հրաժարվելու դրամահավաքի վերաբերյալ հաղորդագրություններ ստանալուց:
- Ծառայությունները ստանալ այնպիսի ձևով, որը հարգում և հաշվի է առնում լեզվի, մշակույթի և կարողությունների ազդեցությունը անձի վրա:
- Խնդրել և ստանալ Ձեր բժշկական փաստաթղթերի պատճենը, ինչպես նաև խնդրել, որ դրանք փոփոխվեն կամ ուղղվեն՝ համաձայն 45 CFR §164.524-ի և 164.526-ի:
- Ստանալ բանավոր թարգմանության ծառայություններ Ձեր նախընտրած լեզվով:
- Ստանալ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններից օգտվելու հնարավորություն ցանցից դուրս, եթե Շրջանը չունի մատակարար, որը կարող է մատուցել ծառայությունները:
- Ժամանակին ստանալ բուժում:
- Դիմել բողոքարկման, եթե ստանաք «Նպաստի անհամապատասխանության որոշման մասին» ծանուցում (Notice of Adverse Benefit Determination):
- Միաժամանակ բուժում ստանալ ուղեկցող վարքային առողջության խանգարումների համար:
- Շարունակել բուժումն այնքան ժամանակ, քանի դեռ բուժում իրականացնողը լիազորված է բուժել հաճախորդին:
- Աջակցություն, ուսումնական գիտելիքներ ստանան և բուժվեն ընտանիքները և սիրելիները, եթե բուժում իրականացնողը լիազորված է մատուցել այդ ծառայությունները:
- Բողոք ներկայացրել այն հաստատություն, որտեղ Դուք ստանում եք Ձեր բուժումը, ինչպես նաև Շրջան և որոշ դեպքերում՝ Առողջապահության և Սոցիալական Ծառայությունների քարտուղարին, և ստանալ պատասխան:
- Կիրառել այս իրավունքները՝ առանց դրանց պատճառով Ձեր ստացած ծառայությունների վրա բացասական ազդեցության:

Ձեր իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք Ձեր «Հիվանդի համար ձեռնարկը» կամ այցելեք publichealth.lacounty.gov/sapc/PatientPublic.htm կայք՝ օրենքով կամ կանոնակարգերով նախատեսված մյուս բոլոր իրավունքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: